

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ
ԲՈՒՍԱՆՈՒՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՊԱՐՄԿԵՐՆՈՒՄ

ՍՈՆԱ ԴՎԹՅԱՆ

Գաղտնիք չէ, որ բազմաթիվ լեզուների բուսանվանական համակարգերում զգալի է տարբեր կենդանիների անվանումներով կազմված բուսանունների թիվը: Այսպես օրինակ, հայերենում 3450 բուսանունից 400-ի ($\approx 12\%$)¹ կազմության մեջ առկա են վայրի և ընտանի տարատեսակ կենդանիների, թռչունների, սողունների ու միջատների անվանումներ: Այսպիսի բուսանունների գերակշիռ մասը ժողովրդական անվանումներ են, այսինքն՝ ստեղծվել են տվյալ լեզուն կրող հանրային կենցաղային փորձի ու աշխարհընկալման առանձնահատկությունների, իրերն ու երևույթները այլաբանորեն արտահայտելու շնորհիվ: Բուսանունների այս խմբում կան նաև այսպես կոչված «թափառող բուսանուններ»: Դրանք բառակազմական միանման կաղապարներով ստեղծված բուսանուններ են, որոնք ունեն աշխարհագրական լայն ընդգրկում: Այսպես օրինակ՝ հայ. *արագլակտուց*, *ճայկտուց* կամ *կռնկախոտ* բուսանունը այլ լեզուներում ունի հետևյալ համարժեքները՝ պրսկ. *nuke laklaki* [نوکه لکلکی] (բառ. «արագիլի կտուց»), լատ. *Pelargonium L. Her.* (*Pelargos* – «արագիլ»), *Erodium L. Her.* (*erodius* – «ճայ»), անգլ. *stork's bill* («արագիլի կտուց»), *heron's bill* («ճայի կտուց»), *crane's bill* («կռունկի կտուց») գերմ. *Rosenstorchschnabel m* («վարդագույն արագիլի կտուց»), ռուս. *аистник* (*аист* – «արագիլ»), *журавельник* (*журавль* – «կռունկ»): Կան նաև բուսանվանական պատճենումներ, որոնք բնորոշ են որոշակի տարածաշրջանի և կիրառվում են հարևան մի քանի լեզուներում: Իհարկե, բոլորովին պարտադիր չէ, որ այդ լեզուներում դրանք լինեն միևնույն բույսի անվանումը: Այսպես օրինակ՝ հայ. *կաքավախոտ* (լատ. *Dryas L.*) բույսի համարժեքը ռուսերենում *кыропаточья трава* (բոց. «կաքավի խոտ») անվանումն ունի, սակայն այս նույն կազմությամբ բուսանունը պարսկերենում և թուրքերենում այլ բույսեր են նշանակում. հմմտ. պրսկ. *alaf-e kabki* [علف کبکی] (բոց. «կաքավի խոտ») – լատ.

¹ Հոդվածում հայերենի բուսանվանական բառաֆոնդի քննության համար հիմք է ծառայել Ռ. Ս. Ղազարյանի «Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան»-ը (Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981) ժամանակագրական առումով ամենավերջին համապարփակ բառարանը, իսկ պարսկերենի համար՝ վերջին տարիներին լույս տեսած ամենաընդգրկուն պարսկերեն-լատիներեն-անգլերեն բառարանը **Mozaffariān, V.**, *Farhang-e nāmā-ye giāhān-e Irān: latini-englisi-farsi, Farhang-e mo'āser, Tehrān, 1386/2007:*

Bongardia Chrysogonum (L.) Boiss., թրք. keklik otu (բոց. «կաքավի խոտ»), ատրպատականյան թրք. kahlik oti [کھلیک اتی] կամ kalkuti [ککوتی] = պրսկ. kākuti [کاکوتی] – լատ. Ziziphora L.: Լինելով ժողովրդական բուսանուններ և հաճախ չունենալով վաղ գրավոր վկայություններ՝ մեծ մասամբ հնարավոր չէ պարզել, թե այս անվանումները որ լեզվում են առաջինը ստեղծվել, այնուհետև պատճենվել հարևան լեզուներում:

Կենդանիների անվանումները բուսանուններում հանդես են գալիս որոշակի գործառնություններով՝ բույսի արտաքինը նկարագրելու, դրա որակական հատկանիշները ներկայացնելու, տվյալ կենդանու և բույսի հարաբերակցությունն արտահայտելու համար և այլն: Ընդ որում, եթե որոշ դեպքերում հնարավոր է պարզել կամ ենթադրել, թե տվյալ բույսն ինչու է այս կամ այն կենդանու կամ դրա մարմնի մասով կոչվել (օր. *որդանխոտը*, որ որդան կարմիրի խոտն է), ապա շատ դեպքերում միայն մեկ լեզվի շրջանակներում հնարավոր չէ պարզել, թե տվյալ բույսն այդ կենդանու հետ ինչ կապ ունի: Օրինակ, հայերենում ունենք *լվախոտ* անունով բույս. պարզ է, որ այն ինչ-որ կերպ պետք է կապված լինի լվի հետ, բայց թե ինչ հարաբերության մասին է խոսքը, պարզ է դառնում, երբ քննում ենք դրա պարսկերեն ու անգլերեն համարժեքները: Պարսկերենում այն կոչվում է kakkos̄, իսկ անգլերենում՝ fleabane, երկուսում էլ այն նշանակում է «լու սպանող»:

Կենդանիների անվանումների կիրառությունները բուսանուններում ենթարկվում են որոշակի օրինաչափությունների թե՛ գործառնությունների և թե՛ իմաստային առանձնահատկությունների տեսանկյունից: Դրանք բացահայտելու համար ստորև քննության են առնվում հայերենում և պարսկերենում *շուն* և *գայլ* կենդանանուններով կազմված բուսանունները, որոնք երկու լեզուներում էլ կենդանիների իմաստային դաշտին պատկանող բուսանունների մեջ ամենամեծաթիվ խմբերից են: Հայերենում *շուն* բառով կազմված բուսանունների թիվն անցնում է 2 տասնյակից, մոտավորապես նույնքան են նաև *գայլ* բառով կազմվածները: Պարսկերենում *շուն* բառը կիրառված է մոտ մեկ տասնյակ բուսանուններում, *գայլ* և *շնագայլ* անվանումները՝ նույնպես տասական: Ընդ որում, *շնագայլ* բառով կազմված պարսկերեն բուսանունների հայերեն համարժեքի կամ պատճենի մեջ հանդես է գալիս *գայլ* բառը: Պարսկերենում մի շարք դեպքերում միևնույն բուսանունը կազմվում է և՛ *շնագայլ*, և՛ *շուն* անվանումներով²:

Գայլն ու շնագայլը վնասաբեր ու վտանգավոր կենդանիներ համար-

² Հարկ է նշել, որ պարսկերեն բուսանուններում *շնագայլ* բառի համար գրական պարսկերենում առկա šoyāl [شغال] ձևի փոխարեն կիրառվում է միևնույն բառի šāl [شال] բարբառային տարբերակը, որը հատուկ է հարավկասպյան լեզուներին՝ մագանդարաներենին, գիլաքիին, Մեմնանի, Լանգեռուդի և տարածաշրջանի մի շարք այլ բարբառների: Ընդ որում՝ այս լեզուներում և բարբառներում *շուն*, *գայլ* և *շնագայլ* բառերով կազմված բուսանունների թիվը մի քանի անգամ գերազանցում է միևնույն կառույցն ունեցող պարսկերեն բուսանունների թիվը:

վելու պատճառով բուսանունների մեջ ևս «բացասական» իմաստային լիցք ունեն և նշում են բույսի վայրի, ոչ մշակովի և կամ վնասակար լինելը³: Շունը թեև վայրի կենդանի չէ, բայց նրա նկատմամբ եղած անարգական վերաբերմունքի պատճառով այն ևս բուսանուններում նշում է տվյալ բույսի վայրիությունն ու ուտելու համար անպիտան լինելը: Իրանում շան բացասական կոննոտացիայի հավելյալ պատճառ կարող է լինել նաև իսլամում այդ կենդանու նկատմամբ եղած վերաբերմունքը:

Շուն, գայլ, շնագայլ կենդանանունների քննությունը հայերեն և պարսկերեն բուսանուններում ցույց է տալիս, որ վերջիններս այս լեզուների բուսանվանական համակարգերում հիմնականում հանդես են գալիս հետևյալ գործառույթներով.

1. նշում են բույսի արտաքին նմանությունը տվյալ կենդանու կամ նրա մարմնի որևէ մասի հետ, օր.՝ հայ. *շնատավ* = պրսկ. sag dandān [سگ دندان] – լատ. Pycnocycla Lindl., *շնագի* = պրսկ. sag dom [سگ دم] – լատ. Cynosurus L., *շնալեզու* = պրսկ. sag zabān [سگ زبان] – լատ. Cynoglossum L., ինչպես նաև *շան բերան* – լատ. Antirrhinum, *շան պտկունք* – լատ. Cordia L., *գայլաթաթ* – լատ. Alchemilla L., *գայլոտն* կամ *գայլաթաթ* – լատ. Lycopodium clavatum L., *գայլաշուրթ* – լատ. Aconitum anthora L., *գայլի ականջ* – լատ. Tamus L., *գայլի վիզ* – լատ. Orobanche L., *գայլի թաթիկ* կամ *գայլի տոտիկ* – լատ. Ranunculus L., պրսկ. *pā-ye gorg* [پای گرگ] (բոց. «գայլի ոտք») – լատ. Lycopus L., պրսկ. *šāl dom* [شال دم] (բոց. «շնագայլի պոչ») – լատ. Polypogon Desf., պրսկ. *šāl pestāne* [شال پستانه] (բոց. «շնագայլի պտուկ») – լատ. Melia Azedarach L. և այլն:

2. Նշում են բույսի որևէ որակական հատկանիշ. վայրի, ոչ մշակովի կամ վտանգավոր և թունավոր լինելը՝ հայ. *շնախաղող* = պրսկ. sag angur [سگ انگور] – լատ. Solanum nigrum L., *շնկոտեմ* – լատ. Thlaspi arvensis L., *շնակարոս* – լատ. Aethusa L., *շան սխտոր* – լատ. Ornitogalum L., *գայլասխտոր* – լատ. Scilla L., *գայլի տանձ* – լատ. Aristolochia L., պրսկ. *šāl anjir* [شال انجیر] (բոց. «շնագայլի թուզ») – լատ. Ficus carica L., *šāl kanaf* [شال کنف] (բոց. «շնագայլի կանեփ») – լատ. Abutilon Theophrasti Medic., *šāl beh* [شال به] (բոց. «շնագայլի սերկևիլ») – լատ. Cydonia oblonga Mill., *šāl piāz* [شال پیاز] (բոց. «շնագայլի սոխ»), *šāl senjed* [شال سنجد] (բոց. «շնագայլի փշատ»):

3. Նշում են տվյալ բույսի թողած ազդեցությունը կենդանու վրա, օր.՝ հայ. *շնամեռուկ*, *շան մահարար*, *շուն սպանող*, *շնթուր*, *ընձախոտ* *շնասպան*, *շնախոտ* = պրսկ. sag koš (سگ کش) – լատ. Cynanchum L., *գայլախատ մահացու* – լատ. Daphne mezereum L.: Բնականաբար, այս բն-

³ Հայերեն, ինչպես նաև հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական մի շարք լեզուներով վկայած աղբյուրներում շնագայլի և գայլի մասին եղած առասպելական պատկերացումների ու հավատալիքների մասին առավել մանրամասն տե՛ս **Martirosyan H.**, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, Brill Leiden-Boston, 2010, էջ 789-796:

լոր բույսերը թունավոր են, թեև սրանց մի մասը օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ, բայց բժշկարաններում զգուշացվում է, որ դրանց մեծ դեղաչափերը վտանգավոր են մարդու առողջությանը:

4. Նշում են կենդանու համար տվյալ բույսի՝ որպես կեր ծառայելը⁴.
շան թուփ – լատ. *Chenopodium capitatum* L., շան ալոճ – լատ. *Crataegus* L., շան կաղին – լատ. *Quercus* L.:

Մի շարք դեպքերում հնարավոր չէ պարզել, թե ինչ հարաբերակցության մեջ են կենդանին և բույսը: Այսպես, օրինակ՝ հայ. *շնավարդ* (պրսկ. *gol-e sag* [گل سگ], բոց. «շնավարդ»), լատ. *Rosa canina* L., > հուն. *κυνόροδος*) բուսանվան ծագումը տարբեր աղբյուրներում տարբեր կերպ է բացատրվում.

1. բույսը նախկինում օգտագործվել է կատաղած շան կծածը բուժելու համար⁵,

2. շուն բառն այստեղ ցույց է տալիս բույսի վայրի, ոչ մշակովի լինելը⁶,

3. բույսն այս անունը ստացել է իր սուր ու կեռ փշերի համար, որոնք կատաղած շան ժանիքների պես բռնում են անցորդներին⁷:

Այս մեկնություններից առավել հավանական է թվում երկրորդ տարբերակը: Իսկ առաջինի համար հայերենում ունենք *շնդեղ* (լատ. *Colchicum*) և *կատաղած շան խոտ* (լատ. *Alyssum* L.) բույսերը, որոնք էլ հենց նման դեպքերի համար են կիրառվել:

Հետաքրքիր է փաստել նաև, որ այս շարքի հայերեն բուսանուններում հատկացուցիչ – հատկացյալ կապով հանդես եկող անվանումները հաճախ նշում են տվյալ բույսի՝ շան համար կիրառելի, ուտելի լինելը, ինչպես օրինակ՝ շան թուփ, շան ալոճ, իսկ բարդ կազմությամբ անվանումները ցույց են տալիս բույսի որակական հատկանիշը՝ վայրի կամ վտանգավոր լինելը՝ օրինակ՝ շնկոտեմ, շնակարոս, թեև կան դեպքեր, երբ նույն բույսն անվանման երկու տարբերակներն էլ ունի, օրինակ՝ շնախաղող, շան խաղող, շան լոլիկ – լատ. *Solanum nigrum* L.:

⁴ Կենդանու անվանման նման կիրառության ամենահայտնի օրինակներից է միջին պարսկերենից մեզ հասած *aspast* (>հին պրսկ. *aspo-asti*, նոր պրսկ. *aspast*)՝ *asb* «ձի» և *ad* «ուտել» բայի հիմքով կազմված բուսանունը, որը բառացի նշանակում է «ձիու կեր»: Հին Իրանից այս բույսը ձիերի հետ մեկտեղ արտահանում էին Առաջավոր Ասիա, իսկ մինչև Ք. ա. II դար՝ նաև Արևելյան Ասիա, ուստի ունենք այս բույսի *aspastu* ձևով վկայություն նաև աքքադերենում՝ Ք. ա. VII դ.-ից (<http://www.iranicaonline.org/articles/flora-i-historical-background>): Հայերենում, բացի սրա համարժեք «առվույտ» և փոխառված «ասպաստ» ձևերից, առկա են նաև «մարառվույտ», «մարական առվույտ» տարբերակները (**Ա. Մուրիսյան**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., ԵՊՀ, 2009, էջ 94), որոնք ևս վկայում են այս բույսի՝ իրանական աշխարհի միջոցով մեզ ծանոթ լինելու մասին:

⁵ Տե՛ս **Howard, M.**, *Traditional Folk Remedies*, Century Hutchinson Ltd., London 1987, էջ 133, **Воро́бьев Г. И.** *Древесные породы мира*, т. 3, М., «Лесная промышленность», 1982, էջ 172:

⁶ Տե՛ս **Vedel H. & Lange J.**, *Trees and bushes in Wood and Hedgerow*, Methuen young books, London, 1960, էջ 224:

⁷ Տե՛ս **Leclerc H.**, *Revue de Phytothérapie, Revue d'histoire de la pharmacie*, vol. 42, n. 143, 1954, էջ 392:

Բացի վերոնշյալ դեպքերից՝ կենդանիների անվանումները բուսանուններում կարող են ունենալ նաև այլ մեկնություններ, որոնք ժամանակի ընթացքում կարող են ենթարկվել փոփոխության կամ պարզապես մոռացության մատնվել: Օրինակ՝ հայ. *արջասխտոր* (= *դանձի, խալիար, սխտորուկ, վայրի սխտոր* - լատ. *Allium ursinum* L.⁸) բուսանվան տարանունները առաջին հայացքից կարող են հուշել, որ այն վայրի սխտորի տեսակ է, և *արջ*-ն էլ այստեղ կիրառված է բույսի վայրի լինելը նշելու համար, սակայն տվյալ պարագայում այս կենդանու անվանումը կիրառվել է այն նկատառումով, որ այս բույսը հաճախ աճում է արջերի բնակության վայրերում⁹:

Այսպիսով, հայերենում և պարսկերենում կենդանիների անվանումներով կազմված բուսանունների համեմատական քննությունը ի հայտ է բերում երկու լեզուների բուսանուններում կենդանիների անվանումների կիրառության մի շարք ընդհանրություններ և շրջակա աշխարհը այլաբանորեն նկարագրելու նմանություններ:

Բանալի բառեր - բուսանվանական համակարգ, կենդանանուններ, բառակազմություն, պատճենում

СОНА ДАВТЯН – Фитонимы с названиями животных в армянском и персидском языках. – Названия животных в составе фитонимов исполняют несколько функций: описывают внешний вид, качество растений, а также выражают отношения, связывающие данного животного с растением. Использование зоонимов в названиях растений имеет определённые закономерности как с точки зрения выражения их функций, так и выявления семантических особенностей. Для выявления этих закономерностей в статье рассматриваются фитонимы с названиями собаки и волка в армянском и персидском языках. Данная группа фитонимов является одной из самых больших в семантическом поле названий зоонимов в фитонимах обоих языков.

Ключевые слова: фитонимическая система, зоонимы, словообразование, калька

SONA DAVTYAN – Phytonyms Containing Zoonyms in Armenian and Persian. – Zoonyms in phytonyms have several functions. They can describe the plant's physical appearance, quality, the relationship between the animal and the plant, etc. There are a few interesting rules that govern their usage, in terms of both function and meaning. The phytonyms containing the words “dog” and “wolf” in Armenian and Persian illustrate these patterns well, as they are the largest attested group of plants in these languages with such names.

Key words: phytonyms, zoonyms, word formation, calque

⁸ Բուսանվան լատիներեն անվանման մեջ *Allium* բառն ունի կելտական ծագում և նշանակում է «կծու», իսկ *ursa/ursus* բառը լատիներեն «արջ» իմաստն ունի:

⁹ Տե՛ս **Ա. Թորոսյան**, Հայաստանի դեղաբույսերը, Եր., «Հայաստան», 1983, էջ 185: